





Տպարանս փոխադրուած է Պապը ալի
նատտէսի թիւ 38, Իգտամ լրագրին դէմ:

THE UNIVERSITY OF CHICAGO

LIBRARY

1900

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY



ՀԱՆԳԻՍ

ՏԱՍՆՕՐԵԱՅ

— هانراكيداق —

مجموعه علوم

HANRAKIDAGUE

JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIQUE


Ե. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 19

1 ՄԱՅԻՍ 1902

ՄԱՆԿԱԿԱՆ ՈՒՂԵՐՋՆԵՐ

Ա. Ռ. Ա. Ի. Օ. Տ.



Վարդ առնու մ'է Մայիսի
Թռչնիկ' ճի'վ-ճի'վ կը խօսի,
Ծաղկունք ահա կը պարեն,
Կեանք գայ լոյսի աշխարհէն :
Վարդ առնու մ'է Մայիսի :

Թռչնիկ' ճի'վ-ճի'վ կը խօսի
Եւ երգէ գեղն Մայիսի .
Լեզուէն ծորի մեղր համակ .
— Եւ ես կարգաւ քո նամակ ,
Որմէ նեկսար կը հոսի :

Ծաղկունք ահա կը պարեն
Զեփիւռին հետ' մեղմօրէն ,
Բոյր , երգ ու պար ամեն դի ,
Պայծառ առնուն կը փթթի ,
Եւ արքնայ կեանք նորէն :


Կեանք գայ լոյսի աշխարհէն ,
Տե'ս , ծաղկունք պար բոներ են,
Կ'երգեն ծառերն ալ ուժգին ,
Ու ջինջ ամպերն երկնքին'
Կ'արծես զիրար համբուրեն :

Պե'րն , ասունցմէն ահա քեզ'
Կազմած փնջիկս լուսագէս ,
Հետն համբոյրս ջերմագին
Եւ մաղբանքներս առ երկին'
Որ միշտ ուրախ պահէ քեզ :

Տիարպէրի

ԼԵՒՈՆ ՍՐԱՊԵԱՆ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԿԵԱՆՔԷՆ



[ՏՐԱՄԱԽՈՍՈՒԹԻՒՆ]

ԱՐԱՔՄԻՍ, ԵՆ ԶԱՐՈՒՀԻ ԵՐԿՈՒ ՔՈՅՐԵՐ
ՎԱՀԷ ԿՐՈՍԵՐ ԵՂՔԱՅՐՆԻՆ
ՄԱՐԻՑԱ ՈՐՔԵԼԱՅՐԻ ՄԱՅՐԵՐՆԻՆ

Տ Ե Ս Ի Լ Ա.

Վահե. — Մա՛յրիկ, ինչո՞ւ ես ալ հայր
չունիմ:

Մայր. — Ունի՞ս, զաւակս, բայց հոս չէ:

Վահե. — Մեր դրացիին տղան Զարեհը
հայրիկ ունի, ամէն իրիկուն երբոր տուն
դառնայ շուկայէն Զարեհին շաքար, պատ-
կեր, խաղալիկ, նոր հանդերձներ կը բերէ:
Եթէ իմ հայրիկս ըլլար, ինծի ալ կը բերէր,
չէ՞ մի:

Մայր. — Դուն ալ հայրիկ ունիս, ա-
նուշս, բայց հիմա հոս չէ:

Վահե. — Մենք ալ հայրիկ ունի՞նք,
ո՞ր է հապա, ինչո՞ւ բնաւ տուն չգար:

Մայր. — Օր մը կուգայ, որդիս, կամ
մենք անոր կ'երթանք:

Վահե. — Ուրեմն, մայրի՛կ, Զարեհին
պիտի ըսեմ թէ մենք ալ հայրիկ ունինք,
թէ ինծի ալ շուկայէն խաղալիկներ պիտի
բերէ, չէ՞:

Մայր. — Այո՛, սիրելիս, դուռը կը
զարնեն, քոյրերդ ըլլալու են, գնա՛, բա՛ց:
(Կ'երթայ բանալու):

ՏԵՍԻԼ Բ. — ՆՈՅՆՔ ԵՆ ՔՈՅՐԵՐԸ

Արաֆս. — (լալով) Մայրիկ, վարժուհիս
ըսաւ որ « Մայրենի Լեզու » առնենք, մայ-
րիկ... ինծի... Մայր... բենի Լեզու մը
կ'առնեն:

Մայր. — Սակայն, աղջիկս, ստակ չու-
նիմ, այսօր հազիւ ձեր ուտելիքը կրցայ ճա-
րել. մի՛ լար, Աստուած բան մը կ'ընէ:

Արաֆս. — Մա՛յր, ես կերակուր չեմ ու-
տեր, անոր տեղ Մայրենի Լեզու մը առ,
չըլլա՞ր մայրիկ:

Մայր. — Խեղճ աղջիկս, եթէ անօթի
ըլլաս, կրնա՞ս կարդալ:

Արաֆս. — Կրնամ, մա՛յր, անցեալ օր
դպրոց երթալու ատեն, ճամբան չար շուն
մը հացերնիս խլելով փախաւ, տունն ալ
հաց չկենալուն համար ետ չդարձանք, սա-
կայն, մայրիկ, դասերս այնչափ աղէկ սոր-
վեցայ որ վարժուհիս շատ հաւնեցաւ:

Ձար. — Իրաւ է, մայրի՛կ, ես ալ ուրիշ
օր մը անօթի մնացի, սակայն, դասերս լաւ
գիտցայ:

Մայր. — Ե՛րբ, աղջիկներս, ինչո՞ւ անօ-
կը մնաք, գիշեր ցերեկ ձեզի համար կը տա-
տիմ, կը տքնիմ որ դուք հանգիստ ըլլաք:

Ձար. — Օր մը մա՛յր, երբ մինակ դըպ-
րոց կ'երթայի, ճամբան աղքատիկ, խեղճ
տղու մը հանդիպեցայ որ կուլար, պատճառը
հարցնելուս վրայ, յայտնեց թէ անօթի է:
Ես ալ քանի որ առտուն աղէկ կերած էի,
կէս օրուան ճաշիս բոլորը ան խեղճ տղուն
տուի: Մա՛յր, ո՛րչափ ուրախացաւ. վերջէն
հասկցայ թէ հայր ալ չունի եղեր եւ ոչ ալ
մայր: Մենք որչափ երջանիկ ենք որ գոնէ
մայր ունինք:

Վահե. — Չէ, Զարուհի՛, հայր ալ ու-
նինք, մայրիկը ըսաւ որ հայրիկը մեզի շատ
բաներ պիտի բերէ, անանկ չէ՞, մայր:

Արաֆս. — Հա՛, մայրի՛կ, եթէ անօթի
մնամ, ինծի Մայրենի Լեզու մը կ'առնեն:
Մայրիկ, կը յիշե՞ս, օր մը մեզ բոլորտիքը
նստեցուցած Աւետարան կը կարդայիր. այն
ատեն մեզ պատմեցիր Յիսուսի սատանայէն
փորձուիլը եւ քառասուն օր ծոմ պահելը:
Նաեւ յիշեցիր թէ Յիսուս Սատանային պա-
տասխանած է թէ « Մարդ միայն հացով
չապրիր, հապա Աստուծոյ խօսքով: Մա՛յր,
Մայրենի Լեզուն ալ Աստուծոյ խօսքը չէ՞:

Ձար. — Մա՛յր, Յիսուս քառասուն օր
անօթի մնաց եւ բան մը չեղաւ, մէկ օր ես
եւ մէկ օր ալ Արաքսին անօթի կը մնանք,
բան մը չենք ըլլար:

Արաֆս. — Ո՛չ, մայրիկ, Զարուհին անօ-
թի թող չմնայ, անիկայ տկար է, ես երկու
օր ալ անօթի կրնամ կենալ:

Վահե. — Ինչո՞ւ, մայրիկ, անօթի պի-
տի մնան, հայրիկը Զարուհին գիրք չառ-
նե՞ր, հա՞ մայրիկ, մեր հայրիկը հարուստ
չէ՞, ինչո՞ւ գիրք, կօշիկ, չըրկեր:

Ջար . — Մենք հայր չունինք, վահէ՛, հայրեկը մեռած է :

Մայր . — Ո՛չ, ոչ, ձեր հայրը մեռած չէ, կ'ապրի, անկա միշտ ձեզ կը հոգայ :

Արաֆա . — Այո՛, վարժուհիս անգամ մը ըսաւ թէ՛ Աստուած մեր հայրն է, մեզ կը հոգայ, կը կերակրէ եւ կը սիրէ, այնպէս չէ՞ :

Մայր . — Այո՛, սիրելիս :

Արաֆա . — Աստուած Մայրենի Լեզու ալ չտա՞ր, մայրի՛կ :

Մայր . — Այո՛, Աստուած քեզի Մայրենի Լեզու մը պիտի տայ, հոգ մի ըներ, ազօթքնիդ ըրէք, յետոյ գացէք կերակուրնիդ կերէք :

Արաֆա . — Ես անօթի չեմ, մայր, ախորժակ չունիմ, ես Մայրենի Լեզու պիտի ունենամ, չէ՞ :

Ջար . — Մայրիկ, դո՞ւն ինչու համար մեզի հետ չես գար կերակուր ուտելու : Եթէ դուն չուտես, ես ալ չեմ ուտեր :

Մայր . — Ես կերած եմ քիչ մը, գացէք, ես ալ կուգամ վերջը : Դարանը կաթ կայ, կերէ՛ք. քալէ՛, վահէ, դուն ալ հետերնին գնա՛ : (Կ'երթան ամենքի) :

ՏԵՍԻՆ Գ.

ՄԱՅՐԻ՝ առանձին, ձեռքը գոլպայ մը, զոր հիւսելու կ'զբաղի)

Մայր . — (Մինակ) Ա՛հ, Աստուած իմ, սիրելի ամուսնոյս մահուանէն աւելի, այս մատաղ սրտերէն ըզխած պարզ ու միամիտ խօսքերն ու զգացումները վիշտ կուտան, որոնք մօր մը զգայուն սրտին համար նետերէ աւելի սուր են : Շնորհակալ եմ որ սիրելիիս իբր յիշատակ՝ այս փոքր անմեղ, սիրուն աչիկները տուած ես ինձի : Այո՛, ասոնք իմ կեանքիս ուրախութիւնն են, ուսկայն, ասոնց անմեղ արցունքը տեսնել, անոնց սրտերուն կոտորիլը՝ մօր մը համար անտանելի է : Տէ՛ր, տուր որ անոնց կարօտութիւնը չտեսնեմ : (Կ'ընդհատ) :

Ամէնքը մէկէն վազելով

Վահէ — (Շնչասպ առ) Մայրի՛կ, մայրի՛կ :

Մայր . — (Ուղողելով) Ի՞նչ կայ գաւաղներս :

Երեքը մեկեմ . — Ոչխարը ծներ է, խատուտիկ, սիրուն գառնուկ մը ծներ է :

Մայր . — Ո՞վ ըսաւ, ո՞ւր է :

Արաֆա . — Հովիւը բերաւ, մօրը քոյն է, կաթ կը ծծէ կոր :

Մայր . — Գացէք հոս բերէք, թող շատ չծծէ : (Կ'երթան) : (Մեկուսի) Ի՛նչ զարմանալի է մանկութիւնը, պարզ պարագայ մը հերիք է ուրախացնել զայն : Գործնական գտած Ամերիկան՝ այս պզտիկներու ունեցած ջնջին խաղալիկներու չափ հաճոյք չեն ընծայեր : Ո՞վ հզօր Աստուած, որչափ մեծ ես դու այս պզտիկ իրերուն մէջ ալ : Քանի որ ասանկ պզտիկ ու աննշան խաղալիկով մը կ'ընաս կեանք մը, սիրտ մը ուրախացնել, գէթ այս շնորհքները մի՛ գլանոր աւանդմէ : (Վահէին գրկին մէջ աճող օգնելով կը բերեն գառնուկը) :

Ջար . — Մայր, նայէ՛, աղուորիկ չէ՞, ի՛նչ սիրուն աչքեր ունի, քեզի կը նայի կոր մայր : Նայէ, նայէ՛ : (Մայրը գրկեն կ'առնէ) :

Արաֆա . — Մայրիկ, այս գառնուկը վահէին թող ըլլայ, այնպէս չէ՞ : Ես Մայրենի Լեզու մը ունենամ՝ հերիք է :

Վահէ . — Չէ՛, մայր, ես հայրեկը ունիմ, Ջարուհիին թող ըլլայ, անի բան մը չունի. մանաւանդ անի շատ հոգ կը տանի ոչխարին :

Մայր . — Շատ ուրախ եմ, սիրելիներս : որ ասանկ բարեսիրտ զգացումներ ունիք իրարու վրայ : Հիմա, եկէք ազօթքնը ու երթանք պառկինք : (Ամենքը ծունգի կուլ սնմօրեցուն առջեւ եւ միաբերան կ'աղօթեն) :

Մայր . — (Կ'աղօթէ) Ո՞վ Հայր, շնորհակալ եմ քեզմէ, որ այսօր ալ հայրական սիրովդ մեզ պահեցիր, Տէ՛ր, օրհնէ այս պրզտիկները որ քու շնորհքովդ մեծանան. ապա գիշեր ալ հրեշտակդ զրկէ որ մեր վրայ հսկէ, որ առտուն արեւուն հետ քու առջիկ վերատին երկրպագեմ : Ամէն :

Ամենքը (Միաբերան) . Տէ՛ր, յիշէ մեզ՝ նման բոլոր աղքատները, հիւանդները ու պզտիկ տղաքները : Ամէն . (Ով Հայր մեր կ'երգեն եւ իրենց մօրը ձեռքը համբուրելով զիեք բարի խնայեն ու կը մեկնին) :

ՏԵՍԻԼ Դ.

ՄԱՅՐԸ ԵՆ ՁԱՐՈՒՀԻՆԵՐԸ

(Անճրեւոտ ցուրտ առտու մը)

Մայր. — Ձարուհի, այսօր օդը շատ պաղ, փողոցները ցեխոտ են, կօշիկներդ

Վահե. — Իմ կօշիկս թող հագնի, մայր, չըլլա՞ր:

Ձար. — Քուկդ պզտիկ է, անուշիկ եղբայրս, ոտքս չըլլար:

Վահե. — Մայրի՛կ, ըսիր թէ, հայրիկը Արաքսիին Մայրենի Լեզուն ղրկեր է, հայրիկը Ձարուհիին ալ կօշիկ մը չըրկե՞ր:



ծակած են, դպրոց մի՛ երթար, կը հիւանդանաս:

Ձար. — Չէ՛ մայր, ես դպրոցէս ետ չեմ մնար, Վարժուհիս ալ կը նեղանայ:

Մայր. — Շատ ցուրտ է, կը պաղիս:

Արաքս. — Հա՛, հա՛, իմ դասագիրքս մայրիկը գնեց, բոլոր գիշերը գուլպա հիւսեց ու անոր արժէքովը Մայրենի Լեզուս ծախու առաւ:

Մայր. — Ինչէ՛ն գիտես, աղջիկս, ո՞վ

ըսաւ քեզի :

Արաքս . — Երեկ գիշեր, կը յիշե՞ս, արթնցայ որ կուլայիր, երբ հարցուցի թէ « ինչո՞ւ կուլաս » : Դուն « չեմ լար » ըսիր : Այն ատեն, սուտ քուն եղայ որ հասկնամ լացիդ պատճառը, եւ վերջը լսեցի որ կ'ըսէիր. « Շնորհակալ եմ, ո՛վ Աստուած, որ գոնէ ինծի կարողութիւն կը շնորհես աշխատելու եւ իմ աղջկանս գիրքը հայթայթելու » :

Մայր . — (կօսքի փոխելով) Տղա՛քներս, կ'ուզէ՞ք որ Զարուհիին կօշիկ մը գնելու համար գառնուկը ծախենք :

Զար . — Ձէ՛, մայրիկ, գառնուկը մի ծախեր, վահէն շատ կը սիրէ :

Վահէ . — Ծախէ՛, մայրիկ, կօշիկ մը ծախու առ, հայրիկը ինծի ուրիշ գառնուկ մը կը զրկէ :

Արաքս . — Մի՛ ծախեր, մայր, գառնուկն ալ շատ կը տրտմի երբոր մեզմէ զատուի :

Մայր . — Այո՛, սիրելիներս, ես ալ չեմ ուզեր երբեք ձեզի զրկել անկէ, սակայն, գիտեմ որ դուք չէք ալ ուզեր որ քոյրերնիդ բոսիկ դպրոց երթայ եւ հիւանդանայ :

Վահէ . — Այո՛, չենք ուզեր, ծախէ՛, հայրիկը երբոր գիտնայ թէ Զարուհիին բոսիկ դպրոց կ'երթայ, կը սրբողի : Մայրիկ, այս գիշեր հայրիկը տեսայ, մեզի կօշիկ, չաքար, նարինջ բերեր էր :

Զար . — Ձէ՛, մայրիկ, մի՛ ծախեր, ես բոսիկ կ'երթամ, ահա ձմեռն ալ կ'անցնի :

Մայր . — Մինչեւ օգերը տաքնան, դըպրոցը կը ձգե՞ս :

Զար . — Ձէ՛, մայրիկ, ես վարժուհիս շատ կը սիրեմ :

Մայր . — Դու ի՞նչ կ'ըսես, Արաքս :

Արաքս . — Իրա՛ւ մայր, գառնուկը շատ կը սիրեմ. սակայն քոյրս աւելի շատ կը սիրեմ, ծախենք գառնուկը :

Մայր . — Շատ շնորհակալ եմ որ կը սիրես քոյրդ :

Վահէ . — Ես ալ, մայրիկ, երբոր մեծնամ, քոյրերուս համար գիրք, հագուստ եւ գառնուկ պիտի բերեմ չուկայէն, քեզի ալ ծամացոյց, մուշտակ պիտի առնեմ :

Մայր . — Այո՛, սիրելիս, քու հօրդ տեղը պիտի բռնես. դէմքով արդէն կը նմաննիս, կեանքով ու սրտով ալ անոր պիտի նմանիս :

Զար . — Դպրոցին ատենը եկաւ, երթանք Վահէ . Գառնուկը ե՞րբ պիտի ծախուի, մայր :

Մայր . — Այսօր :

Վահէ . — Ուրեմն դպրոց չգացած, վերջին անգամ մ'ալ տեսնեմ ու միաս բարով ըսեմ : Մայրիկ :

Մայր . — Ի՞նչ է անուշիկս :

Վահէ . — Ով որ ծախու առնէ, պատուիրէ որ հոգ տանի ու անօթի չթողուն :

Մայր . — Շատ աղէկ :


Վահէ . — Նաեւ ըսէ որ երբեմն մեր տունը բերեն տեսնելու համար :

Մայր . — Շատ լաւ, հիմա կերակուրնիդ կերէք, որ երթաք, Գացէք գառնուկը անգամ մ'ալ տեսնելու : (Կ'երթան) :

Մայր . — (առանձին). Ներէ՛, Աստուած իմ, ասոնց կարօտի ու սիրոյ խօսքերուն չեմ կրնար արցունքս զսպել : Ի՞նչ միամտութիւն :

ՎԵՐՁ

ԱԿՈՒԼԻՆԷ



ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ԴԱՍԵՐ

Պատի՛կ բարեկամներս .

Այո՛, գիտեմ որ ձեզ կը շահագրգռեն բոլոր ուսումները, եւ օգտակար զբաղումները, դուք կ'ուզէք սորվիլ ամէն բան, արհեստները, աշխարհագրութիւնը եւ թըլաբանութիւնը շատ սիրելի են ձեզի, սակայն ամէն բանէ աւելի հաճելի եղողը բընութեան ուսումնասիրութիւնն է. կա՞յ ուսում մը որ զանիկա գերազանցէ, կարծեմ ո՛չ. մարդ առաջին անգամ անով զբաղած է, հիմակուան հսկա՛յ գիտութիւնը հարազատ զաւակն է բնութեան առաջին պարզ քրննութիւններուն :

Բնական պատմութիւնը շատ կը սիրէք, այնպէս չէ՞. գիտէք նաեւ թէ անիկա երեք մասերու կը բաժնուի, ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ, ԲՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆ եւ ՀԱՆՔԱՐԱՆՈՒԹԻՒՆ, վստահ եմ թէ ասոնցմէ ամէնէն աւելի շահագրգռողը բուսաբանութիւնն է : Ձէ՞ք ախորժիւր բոյսերէն, ծաղիկներէն, ծառերէն, մանաւանդ սա գունաւոր ծաղիկները, ճիւղերու

ծայրերը հաստատուած այն անթիւ թի-
թեռնիկները, որ ձեզի կը հրապուրեն միշտ
իրենց վառվռուն գոյներովը, իրենց հրեշ-
տականման տեսքովը. այս գոհարները, բը-
նութեան անրիճ, կոյս զաւակները, որ
թէ՛ խրճիթին, թէ՛ ապարանին, եկեղեցիին
ու մեհեանին զարդն են գեղեցիկ ու թան-
կադին. այս ծաղիկները չե՞ն զոր դուք
ձեռքէ ձեռք կը յափշտակէք: Բոյսերը սի-
րելնուդ համար, (ինչպէս կ'ընէք յաճախ)
ի՛նչ բոյսէն միւսը կը ցատկէք. կը վազվռու-
տէք, հոս ծաղիկ մը փրցնելով, հոն ճիւղ
ի՛ր, ուրիշ տեղ կանանչուի խոտ մը: Ի՛հ,
ուրեմն այսքան սիրած բաներնուդ վրայ
չէ՞ք ուզեր քանի մը կարեւոր ծանօթու-
թիւններ առնել: Անշուշտ կ'ուզէք, ասիկա
ձեր ամենաբուռն փափաքն է. չէ՞:

Ուրեմն հոս, ձեր սիրական « Հանրագի-
տակ »-ի սիւնակներուն մէջ քանի մը ամփոփ
յօդուածներով պիտի ջանամ ձեզի խօսիլ
բոյսերու բոլոր գործարաններուն վրայ:
Բայց նախ կրնա՞ք ըսել թէ ի՞նչ կը հասկը-
նանք բոյս ըսելով, կամ բոյսին սահմանը
տալ:

Բոյս կը կոչուին այն գործարանաւոր մար-
միկները, որ կը ծնին, կ'աճին (կ'ապրին) ու
կը մեռնին, եւ իրենց համար պէտք եղած սը-
նունքը կ'առնեն միայն այն միջավայրէն ուր
կեցած են:

— Բայց բոյսերն ալ մեզի պէս գործա-
րաններ ունին:

— Այո՛, անոնք ալ ունին իրենց գոր-
ծարանները, բայց ո՛չ մեր գործարաններուն
չափ կատարելագործուած. մի՛ վարմանաք,
ասոր վրայ, որովհետեւ առանց գործարան-
ներ ունենալու կարելի չէ աճում կամ մանա-
ւանդ ներքին աճում ունենալ, ապրիլ. օրի-
նակի համար սա քարերը, անոնք բնաշէնե-
րին աճում մը չունին, այլ միայն արտաքին
պզտիկ աճում մը, եւ ասիկա ալ առաջ կու-
գայ այն խաւերէն՝ որ ժամանակի ընթացքի
մէջ կուգան կը դիզուին անոնց վրայ. ա-
նոնք անգործարանաւոր մարմիններ ըլլալով
ներքին ու եւ է աճում մը չունին: Բայց ո-
րովհետեւ կը տեսնենք թէ բոյսերը ներքին
աճում մը ունին, պէտք է ունենան իրենց
գործարանները ապրելու համար:

Ընթերցասէր բարեկամներս, այնպէս կը
մտածէք թէ բոյսերը չեն զգար, չէ՞: —


Անշուշտ, որովհետեւ շատեր ալ կը կարծեն
թէ բոյսերը զգացում չունին, սակայն կրը-
նա՞ք վստահապէս պնդել ասոր վրայ, ո՛չ,
որովհետեւ մենք տակաւին չենք կրնար բը-
նութեան անսահման գաղտնիքներուն մէջ
թափանցել. բնութիւնը մեծ արձանագիրք
մըն է, ծածկուած անհուն, անհատնում մե-
հեղադրոյթներով, որոնց շատերը չպիտի
կրնայ լուծել ու եւ է Շամբոլիոնի մը հան-
ճարեղ միտքը: Այսպէս մենք չենք կրնար
պնդել թէ բոյսերը չեն զգար: Եթէ այս
մասին հարցում մը ըլլուի մեզի, կը պա-
տասխանենք, — չեմ գիտեր. պատասխան
մը զոր չպիտի վարանէին տալ գիտութեան
տիտաններն անգամ:

Գիտէ՞ք թէ բոյս մը քանի՞ մասեր ունի.
Արմասը, Յօլունը, Տերեւները, Ծաղիկը եւ
Պսուղը, այս ամէնուն վրայ յաջորդաբար
պիտի խօսինք: Սակայն պէտք է որ նախ
քննենք հունտի մը կազմութիւնը, որով-
հետեւ հունտէն է որ բոյս մը առաջ կու-
գայ, եւ ետքը տեսնենք թէ ի՞նչպէս և ի՞նչ
պայմաններու տակ:

Քննելու համար հունտի մը կազմութիւնը
առնենք ձեզի ամէնէն աւելի ծանօթ եղող
հունտ մը, օրինակի համար կաղին մը: Ա-
մէնքնիդ ալ ձեռքբերուող մէջ բռնած էք
զանիկա, ու կը շօշափէք անոր դրսի կողմը՝
որ կարծր կեղեւ մըն է, ասիկա հունտին
պատեանը կը կոչուի, կրնանք զանիկա կոտ-
րել ու հանել, այն ատեն կը տեսնենք որ
հունտը երկու մասերու բաժնուած է, այս
մասերն են բլթակները, իսկ այս բլթակնե-
րուն մէջտեղն ալ կը գտնուի պզտիկ մաս
մը՝ որ կը կոչուի սաղմ: Այսչափը գիտնալէ
ետք հիմա տեսնենք թէ այս հունտէն ինչ-
պէ՞ս ծառ մը առաջ կուգայ:

Առնենք զանիկա եւ թաղենք այնպիսի
հողի մը մէջ՝ ուր կը գտնուի խոնաւութիւն,
ջերմութիւն եւ ուր կարենայ օդ թափան-
ցել, որովհետեւ այս կենսական պայմաննե-
րուն մէջն է որ կրնայ առաջ գալ, ծնիլ:
Այս հունտը կ'սկսի հոն ջուր ծծել, որովհե-
տեւ գիտէք թէ հողին մէջ ջուր կը գտնուի
եւ մենք ալ յաճախ կը ջրենք պարտէզները:
Ժամանակ մը ետք հունտը կ'ուռի, կ'ուռ-
ճանայ, անոր պատեանը կը ճեղքուի ու
երկու բլթակները իրարմէ զատուելով
սաղմէն վարկ'երկարի բարակ ծիւ մը (Ա) որ

արմատիկն է, յետոյ ուրիշ մըն ալ վեր կ'ելլէ, ասիկա է ցողնիկը, որ հողէն դուրս երկարելով, իր հետ վեր կը տանի երկու բըլթակները՝ որ տունկին առաջին երկու տերեւները կ'ըլլան։ Այս տունկը հետզհետէ զարգանալով իր վրայ առաջ կը բերէ տերեւներ, ճիւղեր, ծաղիկներ և պտուղներ։



Ըսինք թէ բոյսերը գործարանաւոր մարմիններ են, եւ կ'ապրին, բայց մոռցանք ըսելու թէ անոնք պէտք ունին շնչելու եւ սնանելու, ճիշդ մեզի պէս։ Անոնք իրենց սնունդը կ'առնեն հողէն ու օդէն։ Հողէն կ'առնեն հանքային մարմիններ և օդէն կազային մարմիններ։ Առ այժմ այսչափ։

Յաջորդ անգամ պիտի սկսինք նկարագրելու բոյսի մը գործարանները։

ԱՇՈՏ Յ. ՊԱՉՊԱՉԵԱՆ



ԹԻՉՈՒՆՆԵՐՈՒՆ ԱՂԱՂԱԿԸ

Ֆրանսիոյ թէրմոփոս Բենակոլը հարուստ վաճառական մը կը պահէր միշտ ամենայն սիրով Աստուծոյ պատուէրներն, որոնք ո'չ միայն դարակին վրայ գտնուող մաշած Աստուածա-

շունչին մէջ կը գտնուէին, այլ իր սրտին խորը քանդակուած էին, և պատուիրաններուն ամենազգուարն ալ զանց ընել չէր ուզէր։ Միայն « դուք պէտք չէք թռչուններուն ազազակներուն միտ դնել » պատուէրը չէր բռնել։ Ո'չ թէ քսակը կ'երերցընէր, երբ գարնան մէջ կիւրին կանչելը լսէր կամ ո'չ թէ աղետարեր նշան մը կը համարէր՝ երբ երգող կաշաղակ մը իր ճամբուն վրայէն թռչէր, կամ ո'չ թէ՝ իր վերջին վայրկեաններուն վրայ կը մտածէր՝ երբ մահագուշակ բուրն ձայնը մօտիկ տեղէ մը լսէր, կամ ո'չ թէ նոյն օրը մասնաւորապէս կ'զգուշանար, երբ առաւօտուն իր տան առջեւ հաւ մը կարկաշած ըլլար, այլ անտարբեր կը թողուր կ'անցնէր՝ որ կաշաղակ ու բուռ ուզածնուն չափ պօռան։

Բայց երբ աշնան վերջերը առաջին ուրուրները Մայն գետին ձորերուն վրայ թռչտէին և ձմեռն աւետէին, հարուստ վաճառականը անոնց ձայնին՝ ինչպէս թմրուկին ձայնին միտ դնող զինուորը՝ ականջ կը կախէր և ճամբայ կ'ելլէր ամէն տեսակ բան ընելու նպատակաւ, և ընելիքներուն վրայ ալ երբեք գարնան մէջ չէր մտածեր։

Ունէր շատ ապրանքային վաճառատուներ մէկը միւսէն աւելի մեծ. մէկուն մէջ այնքան շատ ճանդանափայտ, լեղակ և ծիրանի ներկ կը գտնուէր որ, մարդ անոնցմով կըրնար ամբողջ գետ մը կապոյտ կամ կարմիր ներկել։ Ուրիշի մը մէջ շաքարի և խահուէի շատ մը պարկեր գետինէն մինչեւ վեր իրարու վրայ դիզուած էին, և վաճառականը չփոթով թեան մէջ չէր իյնար, օրինակի համար, երբ բոլոր քաղաքացիները, քաղաքապետէն սկսեալ մինչեւ կարուակը իր տունը գային և պուտ մը սուրճ խմէին։ Երրորդին մէջ հին գինիներու տակառներ իրարու վրայ կը կենային։ Վաճառատան վրայ ալ ցորենի համբարանոց մը կար, որուն մէջ հաճարի, գարիի և ցորենի գէղեր իրարու վրայ կուտակուած էին, բայց միւս վաճառատուներուն մթերանոցներուն նման ծախու հանուած չէին։

Հապա, երբ վաճառականը առաջին ուրուրին ձայնը լսէր, կամ իր շտեմարանապետը իրեն ըսէր. « Անոնք հոս են », շաթովուն մէջ երկու անգամ համբարանոց կ'երթար եւ տասը կամ քսան գրիւ ցորեն գա-

տեղով հացավաճառներուն կուտար որպէսզի աղան ու կէս օխանոց հացեր պատրաստեն : Միւս օրերը երբ ցուրտ ըլլային , աղքատ մարդիկ կուգային և մէկ կողմ կը կենային , առանց ստակ վճարելու միայն վաճառականին ձեռագիրը կը ցուցնէին և տոմսակին վրայ նշանակուածին համեմատ հաց կ'ընդունէին :

Թաղին մէջ երկու վարժարան կար , որոնց մէջ թէ հարուստ և թէ աղքատ մարդոց զաւակներ կ'ուսանէին : Դաստիարակ հարուստ աշակերտները կէս օրէն ժամ մը առաջ և կէսօրէն վերջն ալ ժամը երեքին կ'արձակէր : Իսկ աղքատ դասակարգին տըղաքը իրենց նստարաններուն վրայ կը նստէին և կ'սպասէին որ հացավաճառին ծառան գլխուն վրայ խոշոր հացի կողով մը բռնած գար և իւրաքանչիւրին երկու կամ երեք հացիկ տար , որոնք դրսէն կ'իտրոնի նման դեղին և ներսէն ալ ձերմակ և ծառի հիւթի նման կակուղ էին : Այս ձերմակ հացիկներն ալ վաճառականէն էին , որ այնքան ժամանակ կը շարունակէր , մինչեւ որ ծածառը իր անդամտակ տան մէջ աւետէր անոր թէ բոլոր ուրուրները իրենց տեղերը չուած են :

Միայն շտեմարանապետը հետաքրքիր էր և կ'ուզէր գիտնալ թէ ինչո՞ւ համար իր տէրը համբարանոցը կը բանար և կը դոցէր երբ ուրուրները գային կամ երթային , և իրիկուն մը քաղաքին առջեւ գտնուած պարտէզի մը մէջ հարցուց այս բանիս պատճառը իր տէրոջը՝ որ այդ պահուն շատ ուրախ կ'երեւէր : Վաճառականը ծառային երեսը կէս բարկացած դէմքով նայեցաւ , բայց քիչ յետոյ իր դժկամակութիւնը յօժարակամութեան փոխեց , և ըսաւ . « Յովհաննէ՛ս , գիտեմ որ շուն այս բոլորը մէկու մըն ալ չես ըսեր , մինչեւ որ ես իմ նախահայրերուս քով ննջեմ , ուրեմն մտիկ ըրէ : Հայրս խեղճ կօշկակար մըն էր և հազիւ իր վեց զաւակներուն օրապահիկը կրնար հոգալ , և երբ նախընթերքի հացը կը բաժնէր , շուտ մը կ'սպառէր , այս պատճառաւ աշունէն մինչեւ Տեառնընդառաջ՝ ընթերքը բոլորովին ջնջեց մտածելով որ կէսօրուան ու իրիկուան ճաշերը բաւական են այդ կարճ օրերուն մէջ : Եթէ պզտիկներէն մէկը նախաճաշի հացը քինտեղու համար դարակը բանար ու պա-

րապ գտնէր , հայրս սովոր էր ըսել տղուն . « Ուրուրները եկեր և հացը առեր տարեր ես » : Այդ ժամանակէն ի վեր , սրտիս մէջ տարօրինակ զգացում մը կ'ունենամ , երբ այս թռչունները կը լսեմ » :

Այսպէս խօսեցաւ մատակարարապետին տէրը : Իսկ պատմողը կը փափաքի որ բոլոր մարդիկ այս վաճառականին նման թըռչուններուն աղաղակին միտ դնէին , ձմեռը՝ ուրուրներուն , իսկ ամառը ճնճղուկներուն , որոնք կը գոչեն . կի՛ւլ , կի՛ւլ (Տո՛ւր , տո՛ւր) :

Թրգմ.

Ա. ԱՐԹՈՒԿ



Փ Ո Ւ Ր Ի Ն

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՍԿԻՋԻՆ ՄԻՆՁԵՒ ՄԵՐ ՕՐԵՐ

Հ Ի Ն Պ Ա Տ Մ Ո Ւ Ք Փ Ո Ւ Ն

ԳԼՈՒԹ Ը.


ՅՈՒՆԱՍՏԱՆ . — ՆԱԽՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ
(Շաբ . 18րդ թիւն)

Դորիացւոց արեաւմտեան եւ յունական գաղ-
թականութիւններ . — Դորիացիք Հերակլեանց
կամ Հերքիւլէսի տղուն հրամանատուութեամբ
յարձակեցան Պեղոպոնէս (1104) և հաստատ-
ուեցան Լակեդեմոնի (Սպարտա) մէջ : Այս
յեղաշրջումներ ծնունդ տուին ու պատճառ-
եղան որ հաստատուին Փոքր Ասիայի ծովե-
զերքներուն վրայ ընթացիկ գաղթականու-
թիւնները , ինչպէս են՝ Փոկէա (Պողչա ա-
տասը) Եփեսոս , նոյնպէս Ափրիկէի մէջ՝ Կիւ-
րենական գաղութը , Սիկիլիայի մէջ՝ Մէսի-
նան եւ Սիրակուսան , եւ Իտալիոյ մէջ Տէ-
րէնտէս ու Սիրարիսը : Հելլենական ընտա-
նիքը Միջերկրականի բոլոր ծովեզերաց վը-
րայ ցրուած ըլլալով հանդերձ պահեց իր
լեզուն ու կրօնքը՝ չնորհիւ իր պատգամնե-
րուն , իր Ամփիկաիոնեան տօներուն և հան-
րային խաղերուն , ուր կը դիմէին Հելլէն
աշխարհի բոլոր կողմերէն : Ողիմպիական
խաղերը որոնք չորս տարին անգամ մը կը
կատարուէին Յունաց պատմական ժամա-

նակագրութեան հիմը կազմեցին, այսինքն, ցոյներն իրենց պատմական տարիները Ուղիմպիադներով համեմատել սովորեցան:

Քաղաքային հաստատութիւններ. — Լեռնոտ այս երկրին մէջ, ուր ազաւթնութեան թէ՛մ կռուիլը կեանքի եւ ապրուստի պայ-

ներուն ու զոհագործութեանց առաւելագոյն բաժինը, կրօնական կամ կղերական որոշ դասակարգութիւն չկար, ո՛չ ալ այդ մասին մտքերն ամբողջ իրեն հետ շղթայակապող նուիրական ձեռագիր մատեան, նման մեր Աստուածաշունչին կամ Աւետարանին:



Արամազդի արձանը

մանն է, չէր կրնար հաստատուիլ դիւրակեաց Ժողովուրդներու պէս: Իրենց տրքաներն եղան զինուորական պետեր, ծերերու աջակցութեամբ վարելով դատաւորի պաշտօնը, եւ իրենց եկամուտ եւ հասոյթ ունենալով մի միայն պատերազմական աւար-

Մէն մի ընտանիքի պետը իր տան մէջ քահանայ կամ կրօնական էր: Նոյնպէս ալ չկար ազնուապետականութիւն: Հոն ազնուականները ամէնէ աւելի քաջերն են, եւ այս յատկութեանց համար է որ զանոնք դիւցազնորդի եւ աստուածներու զաւակ կը

հաւատան: Որովհետեւ այսօրուան Եւրոպայի արխիդուքսի բաւը արիսապետութիւն ըսել է, եւ Արէս պատերազմին աստուածն էր: Ազնուական, կամ ազնուապետական կը կոչուէին ի հնումն, եւ ի նորումն ալ կը կոչուին այն դասակարգի մարդեր, որոնք երկար դարեր կամ տարիներ իրենց նմանեաց կամ ցեղակցաց վրայ իշխելու, թէ՛ մարմնային կորովով, թէ՛ դիմագծային գեղեցկութեամբ եւ թէ անձնական հարստութիւնով, եւ բարոյական ու նիւթական ազդեցութեամբ անոնցմէ գերազաս դիրք մ'ունեցած են իրենց ազգակցաց ճակատագրին տիրող:

Իրենցմէ վեր կային անկախ մարդիկ, որոց ժողովը միանալով հասարակաց հրապարակներուն վրայ, իր նպատակները կամ աննպատակ տրտունջներով կը յայտնէին պետերու վճիռներուն վայ իրենց վերջնական կարծիքը կամ դատաստանը: Հելլենաց քով ընտանեկան կամ կնոջ դիրքը, բացի երբայցիներէն՝ Արեւելեայց քով սովորական դիրքէն շատ աւելի նախանձելի կազմակերպութիւն ունէր: Կինն աւելի պատուեալ էր եւ գերին նուազ խիստ ճակատագիր կամ ընկերական ու տեղական պայման ունէր: Ընտանեկան հոգերն ու խնամքները կանանց վերապահուած էին:

Հելլէն հին թագաւորաց աղջիկները կ'երթան աղբիւրներէն ջուր բերել կամ հորերէն ջուր քաշել, եւ Անտրոմաքէ կեր կուտայ Հեկտորի ձիերուն:

Յոյները հաճոյք չեն զգար ոչ երկար հացկերոյթներէ, ոչ կոշտ ու բիրտ անձնական կամ մարմնական վայելքներէ, բայց կը սիրեն խաղերը, մարզանքները եւ պարերը եւ բարեկամներու պէտքն ուրիշ ազգերէ աւելի ունին: Մէն մի ռազմիկ համհարլ (գիւնուց եղբայր) մ'ունի: Մենեղաուսդրաս՝ տարիներ վերջ, Լակեդեմոն վերադարձէն յետոյ կը փակուէր իր բնակարանին մէջ եւ կ'ողբար արտասուագին այն բարեկամները զոր Տրովադայի տակ կորսնցուցած էր:

Կրօնք. — Իրենց կրօնքն եղաւ նախ լեռներու, հողմերու եւ ջուրերու մատուցած երկրպագութիւնը. իրենց պաշտած այս բնական իրերէ այլ եւ այլ շատ մը աստուածութեանց կամ դից խումբի մը վերածեցին: Այս դիք կամ դիցունհիք մարդկային

դէմքով կերպարանաւորուած էին, ունեցած մեր մարդկային բոլոր կիրքերը եւ նոյն իսկ չուառութիւնները:

Այնպէս կը հաւատային թէ Տրովադայի առջեւ այս աստուածներէն շատերը վրաւորուեցան:

« Անոնց արիւնը կը հոսի, կ'ըսէ Հոմերոս, այլ արիւն մը նման ցօղին եւ որպէս տեսակ մը աստուածային գոլորշի »:

Կը հաւատային թէ աշխարհքը կը կառավարուի աստուածներէ որոց գլխաւորը կամ պետը Արամազդն էր: Անոր դասակից կը կարգէին Հերմէս, Աթէնաս, Արտէմիս, Ապոլոն, Պոսիդոն, Պլատոն եւայլն:

(Շարունակելի)



Գ Ի Տ Ա Կ Ա Ն Վ Է Պ

Ժ Ի Ի Լ Վ Ե Ր Ն

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

ԴԷՊԻ ԵՐԿՐԻՍ ԿԵԴՐՈՆԸ

— — —

(Շարունակութիւն 18րդ թիւէն)

Քչիկ մը ծարաւս յագենալով՝ կոկորդս թուլցաւ, կրցայ ձայն հանել, խօսիլ:

— Ա՛լ հիմա, մէկ բան մը միայն կըրնանք ընել ըսի, ջուրերնիս հատած է, ետ դառնանք:

Սոսա՞ծ ժամանակս, հօրեղբայրս երեսս նայելու կ'զգուշանար. գլուխը կախած, աչքերը գետինը յառած էր:

— Ե՛տ դառնանք, գոչեցի, Սնէֆէլսի բերանը ելլենք: Աստուած ողորմի և մինչև հոն հասնելու ոյժ պարգեւէ մեզի:

— Ետ դառնանք, ըսաւ հօրեղբայրս ինքնիրեն խօսելու պէս:

— Այո՛, առանց վայրկեան մը իսկ կորսնցնելու:

Պահ մը լռութիւն տիրեց:

— Ըսել է, Աքսէլ, շարունակեց հօրեղբայրս տարօրինակ ձայնով մը, այն քանի մը կաթիլ ջուրը քեզի ոյժ ու քաջութիւն չի տուի՞ն:

— Բաջութիւն:

— Առաջուան պէս վհատած կը տեսնեմ քեզի :

Ի՞նչ տեսակ մարդու հետ էր գործս : Տակաւին ի՞նչ ծրագրեր կային մտքին մէջ :

— Ի՞նչ, չէ՞ք ուզեր . . . :

— Ետ կենա՞լ այս ճամբորդութենէն, երբ ամէն նշան ցոյց կուտայ թէ յաջողելու վրայ ենք . . . երբեք :

— Ուրեմն կորսուելու դատապարտուած ենք :

— Չէ՛, Ա. քսէլ, չէ, դուն գնա՛. մեռնելդ չեմ ուզեր : Հանսն ալ միասին առ. ինծի մինակ ձգէ՛ :

— Ձեզի մինակ թողո՞ւլ :

— Գնա՛, կ'ըսեմ : Այս ճամբորդութեան ձեռնարկեցի. կամ մինչև վերջը յառաջ պիտի երթամ կամ ա՛լ չպիտի վերադառնամ : Իսկ դո՛ւն մէկնէ՛, Ա. քսէլ, գնա՛ :

Հօրեղբայրս վերջին ծայր գրգռուած էր. ձայնը՝ պահ մը մեղմ, նորէն խստացած սպառնական դարձած էր : Խաւար զօրութեան մը՝ անկարելիին դէմ կը մաքառէր : Չէի ուզեր զայն մինակ թողուլ, միւս կողմէ ալ ինքնապահպանութեան բնածին ձգտումը կը թելադրէր զիս փախչելու :

Առաջնորդը՝ սովորական անտարբերութեամբ այս տեսարանը կը դիտէր. կը հասկընար մէջերնիս անցած դարձածը : Ըրած շարժումնիս բացայայտ կը ցուցնէր թէ իւրաքանչիւրը ի՛նչ ուղղութիւն բռնել կ'ուզէր : Քովը գացի ու ձեռքը բռնելով՝ ետ դառնալու ճամբան ցցուցի : Իսկանտացիին թեթեւ մը գլուխը օրօրեց և հօրեղբայրս ցուցնելով .

— Մասթէր, ըսա :

— Տէ՛րը, տէ՛րը, գոչեցի, անզգայ, անիկա քու կեանքիդ տէրը չէ. եկո՛ւր փախչինք :

Հանս անդդուելի կը մնար :

— Հանդարտէ, Ա. քսէլ, ըսա : Հօրեղբայրս, անկէ բան մը մի՛ սպասեր, ինծի մտիկ ըրէ՛ : Երբ դուն գետինը ինկած պառկեր էիր, ես՝ զննեցի այս գետնուղիին կապմութիւնը : Շիտակ կրանիթի զանգուածին մէջ կը տանի : Եթէ քիչ մըն ալ յառաջ երթանք, վստահ եմ որ ջուրի աղբիւր մը գտնանք : Տե՛ս թէ ինչ կ'ըսեմ : Երբ Քոլումպոս իր նաւագններէն երեք օր ուզեց նոր հողեր գտնելու համար, նաւաստիները՝ ի-

րենց սարսափահար, հիւժած վիճակին մէջ իսկ նաւապետին իրաւունքը ճանչցան, և նոր երկիրը գտնուեցաւ : Ես մէկ օր մը միայն կ'ուզեմ, եթէ քսանեջորս ժամէն ջուր չի գտնանք, կ'երդնում որ ետ կը դառնանք :

Հակառակ ներքին բարկութեան չիրցայ դասախօսին վրայ չի խղճալ, երբ մտածեցի թէ ասանկ բան մը ըսելու համար, արդեօք ի՞նչեր չըլլար ներսէն :

— Թո՛ղ ձեր ուզածին պէս ըլլայ, գոչեցի, Աստուած վարձատրէ ձեր կորույթի կամքը : Ծամբայ ելլենք :

Ի՛նչ .

Նոր գետնուղիին մէջ մտանք : Հազիւ քիչ մը յառաջացած էինք, հօրեղբայրս լապտերը՝ պատերուն վրայ պտտցնելով գոչեց .

— Ահա՛ նախնական հողերը, լաւ ճամբու մէջ ենք, քալե՛նք, քալե՛նք :

Երբ հրաշէկ երկիրը պաղիլ սկսաւ, իրեն կեղեւին վրայ պատռուածքներ յառաջ եկան՝ ծաւալին պզտիկնալովը. հողը խպտեցաւ, ձեղքուեցաւ. մէջը մտած ճամբանիս ալ այդ պատռուածքներէն մէկն էր :

Քանի վար կ'իջնէինք, նախնական հողերու շարքին յաջորդումը յստակ մը կը տեսնուէր : Երկրաբանական գիտութիւնը՝ այս նախնական հողը կ'ընդունի իբր երկրիս կեղեւին խարխիւրը, և զայն երեք խաւերու կը բաժնէ. հերձաքար, կնայս և միջաթերթաքար՝ որոնք միշտ կրանիթի վրայ բռնուած են :

Կանաչ երանգներով գունազարդուած հերձաքարի խաւին մէջ կը տեսնէինք պղնձի, մանկանէզի, բլաթինի ու ոսկիի մետաղական փեռեկուածներ : Յետոյ կուգար կնայսը խաւանիտ կազմուածքով մը որու կը յաջորդէր միջաթերթաքարը՝ մեծ թերթիկներու ձեւով որոյ մէջ շատ դիւրին էր գանազանել միջան :

Ժամը տասերկու քին մօտերը, դիտեցի որ պատերը աւելի բիւրեղական գոյն մը առած էին. միջան՝ միանալով քուարձի ու ֆէլտսթաթի հետ կազմած էր ամէնէն կարծր ժայռը որ երկրիս կեղեւին չորս յար-

կերը կը վերցնէ. կրանիթէ բանտի մը մէջ փակուած էինք:

Ժամը Ձին դեռ ջուր չէինք դտած. կըրցած ջանքս կ'ընէի հօրեղբօրս յառաջ երթալուն արգելք մը չըլլալու համար: Վերջապէս ա'լ չզիմացայ, յողնութենէս կիսամեռ գետին ինկայ « կը մեռնիմ կո'ր » պոռալով:

Հօրեղբայրս ետ դարձաւ: Ձեռքերը խա-

բայրս « Ա'լ ամէն բան լմնցաւ » կ'ըսէր, ըսելէ իրաւ ու է աղատումի ճար չէր մընար: Մէկուկէս մղոն թանձր հողի խաւ մը մեղի կ'անջատէր լոյս աշխարհէն և կարծես այդ ահագին զանգուածը սրտիս վրայ կը ճնշէր:

Պահ մը շշուկ մը լսել կարծեցի. քիչ մը ինքզինքս ամփոփելով, տեսայ որ Հանս լապտերը ձեռքը կը մեկնէր: Ինչո՞ւ որ-



չաճեաւած վրաս նայեցաւ ու խուլ ձայնով մը « Ամէ'ն բան լմնցաւ »:

Վերջին անգամ ըլլալով բարկութեան ահեղ շարժում մը նշմարեցի ու աչքերս գոցեցի:

Երբ ինքզինքիս եկայ՝ երկու ընկերներս վերմակներու մէջ ծածկուած գետինը պառկած էին անշարժ: Կը քնանայի՞ն արդեօք: Յոյսս բոլորովին կտրած էի. երբ հօրեղ-

սօրդը կ'երթար: Հօրեղբայրս կը քնանար, ուղեցի իրեն պոռալ. « Հանս կը փախչի կոր » բայց ձայն մը չկրցայ արտաբերել: Սակայն երբ սովորումի պահը անցաւ, տեսայ որ Հանս փոխանակ Մնէֆէլսի ճամբան բռնելու, աւելի գետնուզիին խորերը կը թափանձէր:

ԻԳ.

ՆՈՐ ԳՐՈՂՆԵՐՈՒՆ

Արդեօք Հանս ջուրի կարկաչո՞ւմը լսեր էր. աղբի՞ւր մը գտեր էր արդեօք:

Ժամ մը ամբողջ ուղեղս կը չարչրկէի այս գաղափարներով, կ'զգայի որ խելքս փախցնելը բան մը չէր: Վերջապէս ոտքի ձայներ առի: Հանս ետ կը դառնար. գնաց հօրեղբորս քով ու կամաց մը արթնացուց:

— Ի՞նչ կայ, ըսաւ դաստիասը:

— Վաթէն, պատասխանեց որսորդը:

Դանիերէնէն բաւ մը խօսի չէի հասկնար, բայց պէտք է խոստովանիլ որ ցաւին ազդեցութեան տակ լեզուագէտ մը եղեր էի:

— Ջո՛ւր, ջո՛ւր, գոչեցի յիմարի մը պէս չարժակելով:

— Ջո՛ւր, կրկնեց հօրեղբայրս, հվա՛ր, հարցուց Խաչատուրցիին:

— Նէտաթ, պատասխանեց Հանս:

Շուտ մը ճամբայ ելանք, դեռ ժամ մը չքալած՝ անտովոր շէկոյց մը լսեցի:

— Գետնին մէջ փորուած հեղեղ մըն է, ըսաւ հօրեղբայրս:

Կէս ժամ դեռ քալեցինք առանց կաթիլ մը ջուր տեսնելու: Հեղեղը միշտ սրտին մէջ ծածկուած կը մնար: Լեռներ մը եղաւ, երբ տեսանք որ եթէ քիչ մըն ալ վար իջնէինք՝ հեղեղը պիտի հեռանար մեզմէ: Ուստի ետ դարձանք մինչեւ այն կէտը ուր աղմուկը ամենէն աւելի զգալի էր: Հանս սուր բրիչ մը առաւ և վարնելիք տեղը լաւ մը որոշելէ ետքը սկսաւ կամաց կամաց ծակ մը պեղել:

— Ազատեցա՞նք, գոչեցի:

— Այո՛, ըսաւ հօրեղբայրս: Հանս իրաւունք ունէր: Ի՞նչ ընաիր մարդ է. եթէ մինակ ըլլայինք չպիտի կրնայինք գտնել:

Դեռ ժամ մը չտեւած ջուրի ցայտ մը սուլելով անցաւ և գիմացի պատին վարնըւեցաւ: Հանս աղաղակ մը հանեց ու գետին ինկաւ: Յաւին պատճառը չուտով հասկցայ երբ ձեռքս ջուրին մէջ խոթեցի: Ջուրը կ'եռար կոր:

— Հարիւր աստիճան տաքցած ջուր, գոչեցի:

— Թո՛ղ ըլլայ, կը պաղի, պատասխանեց հօրեղբայրս:

Թարգմ.

ՁԱՐՆՆ Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ



Մեր դեռատի ընթերցողները տեսնելով Հանսագիտակի հրաւերը, շուտ ընդ փոյթ կը ջանան մեզի յօդուածներ հասցնել, յօդուածներ՝ որոնք չափ անապարանօք գրուած ըլլալուն՝ երբեմն անոնց մէջ տառասխալներ ալ կը փախին, յօդուածներ՝ որոնք գուցէ գրողին առաջին արտադրութիւնն են, եւ որոնք սակայն առանց վրայէն երկրորդ անգամ մը կարդացուելու պահաւան կը դըրուին և կը ղրկուին, յօդուածներ վերջապէս և քերթուածներ՝ որոնք հրատարակումէն վերջը՝ եթէ վայն արտադրողները իրենք ալ կարգային՝ գուցէ կարմրէին իրենց գրչէն ելած ու ստորագրութիւննին կրած ըլլալուն համար:

Սակայն այս չէր մեր ուզածը. մենք պիտի ուզէինք ունենալ կոկիկ, խնամուած, գրութիւններ, քանի մը անգամ կարդացուած, սրբագրուած արտադրութիւններ՝ որոնք տարհապարակ կամ ոչինչ աշխատութիւն մը ցուցնելէ աւելի՝ ներհուս ճիգ մը, զգայուն ջանք մը արտայայտէին. քանի որ միշտ աւելի խնամուածին ձգտելը, աւելի կատարեալ դուր մը յառաջ բերելու տենջն է որ յառաջ կը բերէ զարգացումը՝ մանաւանդ գրական ասպարէզին մէջ:

Եւ կան աղնիւ յօդուածագիր, որոնք կը նեղանան մեզի՝ յօդուածին հրատարակուած չտեսնելով, ասանկներուն խօսք մը միայն ունինք ըսելիք. « Երբ օր մը լուրջ գրող մը ըլլալ կ'ուզէք՝ այսօր աշխատեցէք, միշտ աշխատեցէք, համբերութիւն ունեցէք, համուտ եղէք »: Ասկէ դուրս փրկուութիւն չկայ գրական ասպարէզին մէջ:

Ֆրանսական գրական թերթի մը մէջ մանրամէկ մը կարդացի սկսնակ գրողի մը վրայ, ձեզի ալ պատմեմ, կարելի է օգտակար ըլլայ:

« Իրիկուն մը կարճուկ մարդ մը Ժիլ Պլասի խմբագրատունը ներկայացաւ և երկչոտ չէշտով մը հարցուց թէ՞ կարելի չէ՞ Պ. Մօրիս Թալմէյը տեսնել:

— Ի՞նչ պիտի ընես, հարցուց սպասաւորը:

— Կարելո՞ր բան մը ունի՞ր իրեն իմացընելիք:

Մարդուկը աղէկ ըրաւ յօդուած գրելու

բան մը չըսելով՝ որովհետեւ իմացնելիք «կարեւոր բանին» համար շուտ մը Պ. Մօրիսը կանչուեցաւ։

Մարդը՝ շատոնց ի վեր կը ճանչնար Թալմէյրի անունը և անոր սքանչացողներէն մին էր. այժմ կը խնդրէր թէ՛ կարելի՞ է արդեօք... աշխատակցիլ... Ժիլ Պլասի։

— Պատմութիւն մը գրեցէք ու բերէք, ըսաւ Մօրիս։

Մէկ գիշերուան մէջ գրուեցաւ խնդրուածը և յաջորդ իրիկունը մարդուկը գնաց Պ. Մօրիսի դէմ. այս անգամ քիչ մը գունատ էր։

— Աղւորը չէ, ըսաւ Պ. Մօրիս. կարդալէ ետքը, բայց յուսահատելու չէ, ուրիշ մը գրէ։

Յաջորդ իրիկունը սկսնակ վիպագիրը նորէն եկաւ։

— Շատ գէշ է եղեր, կրկնեց խմբագրապետը, ուրիշ բան մը բեր։

Մարդուկը առաջ քիչ մը նեղացաւ, բայց յետոյ մտածեց թէ՛ ինք անիրաւ է, և սկսաւ նորէն գրել։

Երեսուն անգամ «Ուրիշ բան մը գրէ» խօսքը լսեց, և սակայն չվհատեցաւ. վերջապէս քսանըիններորդ թէ՛ երեսուներորդ, լաւ չեմ յիշեր, գրուածքը կարդալով Պ. Մօրիս ըսաւ մարդուկին ուսին զարնելով՝

— Գրածդ սքանչելի բան մը չէ, բայց կ'ընդունիմ, թերթին խմբագրութեան պիտի յանձնեմ։

Յաջորդ օրը՝ մարդուկը նորէն եկաւ։ Այս անգամ Պ. Լասքազ ընդունեց զայն։

— Բարեկամս, վիպակնիդ ընդունուած է, յաջորդ թերթերէն մէկուն մէջ պիտի դրուի՝ վարձքերնիդ երեք ռսկի է, վաղը եկէք անգամ մը։

Պզտի մարդուկը ուրախութենէն արբշտուն դարձաւ։

Յաջորդ օրը, խմբագրատան սանդուղներէն վեր ելլելով՝ խմբագրական սենեակը մտնելու վրայ էր, երբ սպասաւոր մը դիմացը եկաւ։

— Ո՞վ կ'ուզէք։

— Յօդուած մը ունիմ որ պիտի տպուէր։

— Սպասեցէք որ ներսը իմաց տամ։

Խմբագրական սենեակը մտնելը արգիլեալ է։ Երկու ժամեր, «նորեկ աշխատակիցը» կռնակը պատին տողած՝ պատասխանի սպա-

սեց, վերջապէս զարմանալի շարժումներով մարդ մը, սիկառը բերանը, միապակի ակնոցը աչքը՝ քովը եկաւ։

— Ի՞նչ կ'ուզէք։

— Վէպ մը ունէի՝ որ դալիք թիւերէն մէկուն մէջ...

— Դուք Պ. ...նն է՞ք։

— Այո՛։

— Վաղը եկէք։

Ութը ամիս շարունակ, ամէն իրիկուն մարդուկը կուգար 2-3 ժամ խմբագրատան նրբանցքին մէջ սպասելու։

Երբեմն՝ առաջին անգամ հետը խօսած մարդը՝ որ սիկառը բերնէն թողած չէր բընաւ, դուրս կ'ելլէր տեղ մը երթալու համար, մարդուկը անմիջապէս ետեւէն կը վազէր։

— Հիմա չըլլար, վաղը եկէ՛ք։

Ահա՛ այս էր ամէն անգամուն առած պատասխանը։

Վերջապէս վիպակը տպուեցաւ. երկու օր ետքը մարդուկը նոր հազուստ մը հագած էր՝ իր առջի դեղնած վերարկուին տեղ։

Չէք կրնար երեւակայել թէ՛ այս 8 ամսուան սպասումին ժամանակ մարդուկը աշխատած էր, և անմիջապէս ուրիշ վիպակ մը ներկայացուց՝ որ ընդունուեցաւ։

— Ե՞րբ պիտի տպուի, հարցուց խմբագրապետին։

— Չեմ գիտեր... սպասեցէ՛ք։

Յաջորդ օրը՝ վերոգրեալ կատակերգութիւնը նորէն «կաւ»։ Հինգ ամիս ևս սպասելէ ետքը՝ երկրորդ վիպակը հրապարակ եկաւ։

Բայց այս մարդուն համբուրութիւնը, յառաջորդ թիւերէն, խմբագրութեան աչքին զարկած էր։ Օր մը անոնցմէ մին դուռը բանալով ըսաւ։

— Ներս եկէ՛ք, բարեկամս, ձեր պաշտօնը հոս է։

Մարդուկը մտեցաւ Պ. Թալմէյրի, եւ երկչոտութեամբ հարցուց։

— Ներեցէ՛ք զարմանքս յայտնելու թէ՛ ինչո՞ւ համար ամէնէն առաջ քաջալերելով զիս, ետքէն երեսի վրայ ձգեցի՛ք։

— Կը սխալիք, սիրելի՛ս, ձեզի կուրին մէջ նետեցի՝ տեսնելու համար թէ՛ ի՞նչ պէտք կը կուրիք։ Մինչև հիմա տոկուն երեւցա՛ք, հիմա ալ սաղանդնիդ ցուցուցէ՛ք։

Այն օրէն ետքը մարդուն բազմաբանութեամբ, նոյն տարին ինքն վիպակը տպուեցաւ. երկրորդ տարին երեսուն, երրորդ տարին սկիզբներն էր՝ թերթին տնօրէնը իրեն պայմանագրութիւն մը առաջարկեց, ամիսը չորս վիպակ գրելու համար:

Երբ պայմանագրութիւնը ստորագրեցին և գրիչները վար դրին, մարդուկը քովը նորէն տեսաւ սիկառը բերնէն վար չառնող մարդը:

— Հաշտուինք, ըսաւ վերջինը, երթանք միասին ճաշել:

— Ուրիշ օր մը, ետքէն, կը նայի՛նք, գոչեց գլուարթութեամբ մարդուկը՝ անոր հազար անգամ ըսած խօսքերը կրկնելով:

Մ Ի Յ Ո Ւ Մ Շ Ա Ր Ա Դ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն

Ասկէ ետքը շարունակաբար ամէն անգամ երկու կամ երեք շաբաթուրդներ անգամ սիկառը, « Բանբա » ով միասին: — Ընդլայնուած շաբաթուրդները յատուկ բնութեան ենթարկելով դիտողութիւնները պիտի դնենք Հանրագիտակի մէջ, հրատարակելով նաեւ սոյն աշխատութեան մասնակցող բոլոր դպրոցականներու անունները. — Մասնակցող ունեցողները պարտաւոր են իրենց բուն անունը մեզի իմացնել:

ԱՆԿԱՐԳ ԳՐԱՍԵՂԱՆԸ. — Գրասեղանին վրան, տակը: Գրասեղանին մէջը՝ զիրք, տետրակ եւն: Այս աշխատութեան վրայ ունեցած գաղափարներդ: Ի՞նչ կ'որոշէր:

ՀՕՏԵՐՈՒ ՎԵՐԱՊԵՐՈՒՄ. — Գիշերը կը մօտենայ: Ամէն կողմ հանդարտ է: Հօտերը կը հասնին. զանազան ձայն. շուններուն հաչիւնը. հովիւներու կանչ-ուրուտուրը: Գոմ կը մտնեն. գիշեր է:

ԸՆՏԱՆԻՔ ՄԸ, գիւղին մէջ, ամառ գիշեր մը, լուսնի լուսով դաշտը կը ճաշեն:

Սոյն մրցումներուն մէջ առաջին հանգիսացողին՝ Սմբատ էֆ. Դաւթեան կը նշուի Նոր Դպրոցի 10 պրակները ամբողջ, երկրորդին՝ մէկ օրինակ Հանգիսաբան, իսկ երրորդին՝ « Հանրագիտակի » կողմանէ կը նշուի մէկ օրինակ պատկերազարդ Ս. Երկիր կամ Տեղագրութիւն Ս. Երուսաղէմի:

Մրցումներուն մասնակցողները՝ « Հանրագիտակի » ի կողքին վրայ գտնուած մըրցումի կնիքը կտրելով՝ պէտք է զրկեն խումբագրութեան իրենց գրութիւններուն հետ, առանց կնիքի զրկուածները՝ կը մերժուին:

Գրութիւնները պէտք է մինչեւ Յունիս 10 խմբագրութեան հասցնել, սոյն թուականէն վերջ հասածները՝ նկատողութեան չեն առնուիր:

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

38. — Ամէն բանի մէջ եմ, ոչինչին մէջ իսկ, սակայն հող ու երկիր տեսած չեմ, այսու ամենայնիւ միշտ գետինին մէջ եմ, չունչին մէջ կը գտնուիմ, բայց ոչ թոքերու մէջ, գլուխի մէջ չկամ, իսկ բերնին մէջ՝ միշտ:

39. — 1. Ի՞նչ կայ լեռան և ձորին մէջ: 2. Ինչո՞ւ համար ճերմակ ոչխարները սևերէն աւելի կ'ուտեն:

3. Ի՞նչ է այն որ տղոց անվաս հաճոյք է, իսկ մարդոց կորուստ:

4. Ի՞նչ գոյն ունի խոտը երբ ձիւնին տակ ծածկուած է:

ՎՏԱԿ

40. — Մարդ մը մինչեւ 40 կրամ ամէն ծանրութիւն կշռելու համար 4 տեսակ տըրամներ ունի: Որո՞նք են ատոնք:

Հ. Ս. Ս.

41. — Պաշտօնս երկու բայց անձս է մէկ, Մին է կեանք վարել. միւսն տարւոյ ղէկ. եմ չափահաս հայր երեսուն որդի ու Որոց անդրանիկն է խաբերայ օճ: Թ. Կ. ՆԻԿՈՂՈՍԵԱՆ

42.	3.	4.
2.	.	.
.	.	.
1.	.	.
.	.	.
.	.	.
.	.	.
.	.	.

1. Ոչխարի մէկ ազնիւ ցեղը: 2. Հալա-Ամերիկայի մէջ հրաբուխ մի: 3. Հոտաւէտ ծաղիկ մը: 4. Անգլիացի ժամանակակից մատենագիր մը:

Խ. ՐԷԻՋԵԱՆ


ՀԱՆՐԱԳԻՏԱԿ կը հրատարակուի ամեն ամսոյ 1ին, 10ին եւ 20ին			
Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ		ՀԱՍՑԷ	ԳԱՒԱՌՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
Տարեկանը 40 դահեկան		ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ	Տարեկանը 45 դահեկան
Վեցամսեան 20 »		Կ. ՊԱՆԻՍ	Վեցամսեան 25 »
Եռամսեան 10 »		ՊԱՊ ԱԼԻ ՃԱՏՏԷՍԻ	Եռամսեան 12 1/2 »
ՌՈՒՍԻՈՑ ՀԱՄԱՐ		ԹԻԼ 38	ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
Տարեկանը 4 բուպի			Տարեկանը 10 Զրանք

Չեմքէ կը ծախուի հար 40 փարայ

30 — ԼՈՒԾՈՒՄ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐՈՒ

Պ Ա Ն
 Լ
 Ե
 Ք
 Ս Ե Ս Ո Ս Տ Ր Ի Ս
 Ա
 Ն
 Դ
 Գ Ր Է

Դարեգին Միհրդատեանց, Վահրամ Դարազաշեան, Վահրամ Մալէզեան, Արմէն Յ. Աժտէրհանեան (Ս. Սահակեան վրժ. Սամաթիա) : Արմենակ Տէօվլէթեան, Յարութիւն Ն. Նիկողոսեան (Իրրանոսեան վրժ. Ամասիա) : Օր Արաքսի ֆինճանճեան, Երուանդ Մանուկեան (Մ. Դարգմանչայ վրժ. Օրմաբէօյ) : Թաթուլ Նիկողոսեան (Ս. Մեսրոպեան վրժ. Կէտիկիաշա) : Օր. Մառի Ա. Էմէքսիզեան. Մելրոն Մէքէնեան, Յակոբ Սամուէլեան, Վահան Յակովբեան : Յարութիւն Նազարեան : Օհանիկ Դալուստեան : Դարբիէլ Գալլայեան : Հրանտ Սամուէլեան : Դէորդ Գալլան : Գէորդ Փափագեան : Յակոբ Կիւհէրեան : Նիկողոս Նիկողոսեան : Յարութիւն Աւագեան : Միրիճան Հաճիճանեան : Գիրգոր Դալուստեան : Յովհաննէս Նիկողոսեան : Նահապետ Դասապեան : Վարդան Քէլիլեան :



Դարեգին Սահակեանց :

32. — Սարդ, Դափնի, Մամուկ, Թռչուն :

33. — Նոյի տապանին մէջ :



ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ՇԻՆԻՉ ԵՒ ՀՐԱՀԱԳԻՉ ԲԱՐՈՅԱՎԷՊԵՐ

Յօրինեց Ս. ԴԱԻԹԵԱՆ

Մանուկներու, պատանիներու եւ նոյն իսկ հասակաւորներու ընթերցման արժանի բարոյավէպերու հաւաքածոյ մ'է :

Կը զտուի ամեն գրաւանաւազ ֆոլ :

Մեր նոր հասցէին ուղարկութիւն ընել կը խնդրուի :

نشانه بربریان مطبعه جی

استانبول باب عالی جاده سی نمره ۳۸

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՏՊԱԳՐԻՉ — ՀՐԱՏԱՐԱՎԻՉ

Կ. Պոլիս Պապ-Ալի ՃաՏՏԷՍԻ քիւ 38

NICHAN BERBÉRIAN

IMPRIMEUR-ÉDITEUR

Stamboul, Bab-Ali Djaddessi N. 38

Կը խնդրենք մեր Մեծ. Գործակալներէն եւ Բաժանարդներէն՝ որ Հանրագիտակի Երդ թիւէն աւելորդ եթէ ունին՝ մեզ վերադարձնելու չնորհ ընեն :

ԽՄԱԴՐԱՊԵՏ — ԱՐՏՕՆԱՏԷՐ

ԱՐՄԷՆ ԼՈՒԾԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐԻՉ — ՀՐԱՏԱՐԱՎԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Պապը Ալի ճատտէսի, Թիւ 38, Իզտամ լրագրի դէմ

2512 6 of 403 4030
2 4 4 4 4 4

Information

Information

Information

Information

Information



Information

Information

Information

Information

Information

Information

Information



Information

Information

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ Տ Պ Ա Ր Ա Ն Ը

Փոխադրուած ըլլալով՝

Կ. ՊՈԼԻՍ, ՊԱՊԸ ԱԼԻ ԶԱՏՏԷՍԻ, ԹԻԻ ՅՏ. ԻԳՏԱՄ ԼԲԱԳՐԻ ԴԻՄԱՑ

Ստացած է տպագրական նոր

կազմակերպութիւններ եւ կը սպագրէ ամեն

ազգեր, հանդեսներ, օրգաբերականներ, հարսանեաց հրաւիրագրեր, նամակագլուխներ, այ-
ցաբարդեր, եւ սպագրութեան վերաբերեալ ամեն տեսակ պիտոյքներ: — Տպարանին սեփական
2000է աւելի պատկերները յանախորդաց տրամադրութեան տակ են ձրի:

Ամսրցելի մաքրութիւն եւ նշոյապահութեամբ

գաւառներէն ալ կ'ընդունի ամեն տեսակ յանձնարարութիւններ:



ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ նորէրացած Շարագրութեան մրցումներուն
մասնակցողները պարտին սոյն կտրոնը կտրելով՝ իրենց գը-
րութեանց հետ շրկել Խմբագրութեանս, հակառակ պարա-
գային՝ նկատողութեան չեն առնուիր:

Հանրագիտակ ձեռքէ կը ծախուի Պոլսոյ մէջ հատ
40, իսկ գաւառաց մէջ 50 փարայ:

Թ Է Յ

Թ Է Յ

Թ Է Յ



Ը Ն Տ Ի Ր

Հ Ո Տ Ա Ի Է Տ

Խ Ն Ա Յ Ո Ղ Ա Կ Ա Ն

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատունը պատրաստ՝ և թէ օր ըստ օրէ
ամսնոյ թարմ և ազնուագոյն տեսակ թէյերով կրնայ այսօր անմրցելի աժանութեամբ
գոհացում տալ նոյն իսկ էն խստապահանջ թէյի սիրահարներուն: ԵԱՎՐՈՒԵԱՆ եւ ԻՍԱ-
ԳՈՒԼԵԱՆ հաւտատուութիւնը կը թղթակցի գաւառներու հետ եւ յանձնարարութիւններ կը
կատարուին ամենայն ճշգրտութեամբ:

Աժան, ընտիր ու հոտաւէտ թէյ գործածողներու ջերմապէս կը յանձնարարենք ան-
դամ մը այցելել Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ եւ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատունը, ձէլալ-Պէյ խանի
կից թիւ 10, ուր պիտի դռներն մեծաքանակ և փոքրաքանակ թէյի ճոխ մթերք մը:

Ա.Ժ.Ա՛Ն

Ա.Ժ.Ա՛Ն

Ա.Ժ.Ա՛Ն